


2000

364-62

24 Գ Ի Ր ԻՐ
ՈՒՆ ԽՐՀՐԻՍՏՈՍ
ՆՐԱՐԵԱԼ ԱՐԲՈՅ ՀՕՐԻՆ
ԼՆՎԱԳՐԵԱՅ
ԼՆ ՀԱՆՎԵՐԵԱԼ ԻՌ
ՅՈԳՆԱՆՆԵՐԿԱՄԲ Մ
ԹԵՍԻ ԱՐԴԱՊԻ
ՆԱՍԻՐԻ
ՏՊԱԳՐԵՆԴ
ՏՆ Գ
ԼՆ
ԱԹՈՒՆԵՆ Լ
ՍՈՍ
ՍԱՆԴՆՈՒԿՈՒՆ
ՕԱԿՈՐԱՅ ԼՏԵ
ՆԱՍԱՅ ԼՏԱՐԱՆ
ԴԱՎԵՍԱՆ
Ի ՏՊԱՐԱ ԻՆՎԱՆ



* Ո՛ր է/բ Ե՛ւադր Հայր մե/ Րհտիր

7-5-18



Ստորեւոս Վարդապետի Լեւոնասի
 բեալ վասն Վարդապետի Բանի:
 Լեւալ ի վարդապետութեան սորբ Տօրի
 Լաւագրեաց: որ միտ տնայապետի կոչի: Լաւ
 ի նորին վարդապետ հեղեղապետ սրբոյն Վեդուհ:
 Որ ցանկացի գոյր ի բանանց հաւատեալ ի մի:
 ի պէտք բանասէր տնայանց: ի բանն պօշուսի
 որ տէ: Սի՛ դք խաբեացէ զձեզ ու
 տեղով կամ ըմպելով: կամ մասամբ
 տօնի կամ ամսամտիւք կամ շաբա
 թուք: Որ է ամ ինչ ի պէտք ապակի
 3-շաբա Որ ի սրտն ունեան է
 Գլուխ Լ:



ԼԵՒԻՆՆՈՒԹԵԱՆ
 բաժանի յերես:
 Վախ ի յարդիւնկնն:
 զոր կամօք մերովք
 յանձն առնուիք գործել զառաքի
 3 նու



նուին: Լըկըդ՝ ՚ի բարոյականսն.
որք ՚ի բարուցն ունին: Ոպ տատ
րակ՝ ողջախոհ, առիւծ՝ արի. և
այլն: Լը ոպ թէ որք ՚ի մօրէ ներ
քինի է. և կամ թէ բարքն ոչ տա
նի միս ուտել և գինի ըմպել. և
այլն: Վս որոյ սակաւ գոյ վարձս:
Լըրդ՝ ՚ի շնորհացն անային հաս
տատի. զոր տրն ասէ՝ առանց իմ,
ոչ ինչ կարէք առնել. որպ և սբ
հարանցն: Վս և որք սորա ոչ հա
զորդին՝ ոչ պսակեացին:

Բայց գիտելի է՝ զի ութն խոր
հուրդս ասէ և ագրիոս որք պա
տերազմին և այսմ առաքինուէցս.
զորս տեսանելի է:

Նախ՝ Արկորստութիւնն:

Երկրորդ՝ Պռնկութիւնն:

Երրորդ՝ Երծաթսիրութիւն:

Չորրորդ՝ Տրամութիւնն:

Հինգերորդ՝ Բարկութիւնն:

Վեցերորդ՝ Չանձրութիւնն:

Եօթներորդ՝ Նորափառութիւն:

Աւթերդ՝ Հպարտութիւն. որէ ամ
բարոյականութիւն:



Եւ նախ զՈրկորստութեն տես
 ցուք: Իսկ թէ վնէր առաջին
 դնէ քան զամ զսա: Կախ՝ զի սան
 պատճառ ամ մեղաց. յորոյ պատճա
 ռէ և այլ ամ մեղքն յառաջանան.
 Վն և առաջին դնէ: **Եւ** երկրորդ
 զի բնութի ունի զուտելն ամ մահ
 կանացու կենդանի. և առձեռն
 պատրաստ է սա յամ ժամ. զի և
 պատճառ կելոյ է. և դիւրան իմեղս
 միտէ: Վն առաջին դնէ:

Եւ կոչի սա կրկնակի անունամբ.
 այսինքն՝ Որկորստութի և Որկո
 րամոլութի: Որկորստութի կոչի,
 զի ստուգաբանի սա՝ սրտութեան
 որկոր: Կամ որկոր է որ ստէ զճշ
 մարիտ վարքն: **Եւ** կամ թէ՝ որ
 ամա՝ հետեւեցաւ՝ կորեաւ ստութի
 իրօք: Իսկ որկորամոլ կոչի ուն ձի
 իգամոլ. այսն և որ ամա հետեւի,
 մոլի՝ իբրեւ զգիւնահար: զի այս ա
 նուն՝ ամա միայն է և ոչ այլ մեղաց
 Կամ թէ՝ որ ընդ բերանն անցաւ՝
 ընդ խռափողն կորեաւ. զի մինչ

ցայն վայր տայ համ կերակուրն :
 Իսկ սիրող նմին՝ կամի միշտ իբաղթ
 ըլլալ պահել զնա , և նա ոչ պահէ
 առ ինքն՝ այլ անցուցանէ • վսրոյ
 անյագ լեալ՝ մոլի ծառայ նմին :
 Իսկ սա կորուստէ միոյ անձին •
 այսինքն նմին որ զսա՝ ունի :
 Եւ սա բաղկանայ ի բազմաց :
 Եւ Եսայի՝ ի սովորուէ , ոպ թէ դք
 զմանկունս՝ փոքր փոքր կերակրես
 ցէ , ոչ այնպէս լինի որպէս որ զբա
 ղումն ուտիցէ : Եւ ջերմութի սրտին առա
 չեւ , վսյ զոր ինչ ուտէ՝ փութով
 հալէ • և միւսոյ ևս կարօտանայ :
 զորօրինակ՝ բարկ կրակ վառեալ
 ինեւրքոյ պուտկի , իսկոյն տոչորէ
 զոր ինչ ի պուտուկն գոյ :
 Եւ Եսայի՝ ի լեարդէն • այսինքն՝
 զի զոր ինչ ստամոքսն հալէ՝ եթէ
 գոյ կարողութի լերդին ներկելոյ
 զնա և արին շինելոյ , ապա ևս ինդ
 րէ կերակուր : Իսկ թէ ոչ ունի

լեարդն կարողութի, 'ի հարկէ դա
դարի ստամոքսն 'ի խնդրելոյ զկե
րակուրն. թէպէտ և կարող իցէ.
Չորրորդ՝ լինի որկորամուկին 'ի յա
ղեացն. ոպ թէ շինուածք աղեացն
մեծագոյն լինի՝ բազում կերակուր
պիտի զի ընու զնա: Այնպէս յայտ
է 'ի մեծանձն մարդոյ զի ոչ ինչ
ցաւի 'ի բազում ուտելոյն. վս զի
գոյ տեղիք որ զկերակուրն տանի.
Ասկ փոքրանձն մարդն ոչ կարէ բա
զում ինչ ուտել. թէպէտ և խնդ
րէ ստամոքսն. վս զի ոչ գոյ տեղիք
որ տանի զկերակուրն.

Հինգերորդ՝ լինի 'ի ջրգողութե ստա
մոքացն. զորօրինակ՝ ջրգող ցաւն
որ 'ի յաման ստամոքացն որ զջուրն
առնու յինքն՝ եթէ է ամբողջ, մի
ըմպելն բաւական լինի. ապա թէ
պատառոտեալ է որպ զտիկս հինս՝
փարթէ յամ կողմանց. վս և դար
ձեալ ջուր խնդրէ և ոչ յագի ամե
նեին ջրով: Այսպէս և բուն ստա
մոքսն որ զկերակուրն հալէ. եթէ

անկանի նա 'ի ցաւոց, այնուհետեւ
զկերակուրն զոր ինչ առնու' փար
թէ. և այլ ևս ցանկայ:

Սեցերդ' լինի 'ի մեծ իմն ցաւոց,
և սա' երեք կերպիւ': Նախ է ցաւ
որում ցեց ասեն. որ ուտէ զկերա-
կուրն և ոչընչացնէ ամենեւին. և
այն աներեւութաբար. վայ և այլ
կերակրոյ կարօտանայ: և այս յայն
մարդոյն յայտնի է որ բոլորմ' կերա-
կուր ուտէ և ոչ զօրանայ ամենեւին:
և Լկդ' ջերմոտուին. զի սա յոյժ
ջերմային է և երկար ցաւ. վայ 'ի
խիստ ջերմութեն որ սիրտն վառի'
փութով այրէ զկերակուրն. և ոչ
թէ պարզէ կամ եփէ: վայ և այն
պիսի մարդն անկարմնայ: և Լքդ'
ուրկուէ ցաւն. որ զամ' կերակուրն
ցաւն փութով յինքն ամփոփէ:
Լօթներդ' լինի 'ի կարօտութե' կե-
րակրոց. և այս յայտ է 'ի սով ժա-
մանակաց. զի թէ բոլոր զամ' հաց'
մի մարդոյ տաս ոչ յագի:

Աթերդ' լինի յաղքատութե'. ոպ

աղքատ ոք որ զամ գրուես շրջին
և յամ գրուես ուտեն և ոչ յա
գին . վս զի չքանորեալ է աչքն .
զի որ յայլոց ձեռն տեսանէ՝ միշտ
կարօտ մնայ : Իննեքդ՝ լինի ՚ի պա
կասուէ խրատողաց և բժշկաց , զի
թէ ՚ի սովորուէ է այս ախտ՝ պաշտի
գող խրատող . և յոչ գոլն՝ նոյն ախտ
առանելու : և թէ ՚ի ցանոցնէ զոր
ասացաք , պարտի գող բժիշկ . իսկ
յոչ գոլն՝ նոյն մնայ :

Տասնեքդ՝ լինի յառանձնուէ մար
դոյն . զի թէ ոք ՚ի մարդոյ միջի կայ
թէպէտ և կարի՝ որկորամուկիցէ՝ ա
մաջի յեղբարցն և հարկիւ կտրէ յին
քենէ զայն ախտ : Իսկ առանձինն՝
ոչ յումեքէ ոչ ամաջի . վս զի ոչ են
մերձ իւր . վս և թէ առաքինի ոք
ևս իցէ՝ երբ առանձին զկերակուրն
գտանէ , հարկիւ որկորամուկ լինի :
Մեծսնեքդ՝ լինի յառանելու թէ
ընչիցն . զորօրինակ թէրք՝ զի ու
նին բազում խորտիկս . և յամ ժամ
ունին կարողութի մերձ ածելոյ .

Վսյ և որկորամոլ լինին: Վս զի եր
 կոքեան ծայրքն չար են. այսինքն՝
 խիստ աղքատութիւն, և առանել փար
 թամուլթին: Լորկոտաներդ՝ լինի
 յիմարուէ մտացն. զորօրինակ որք
 ՚ի խելացն թափեալ են՝ շրջին յամ
 տեղիսն. և ամ ոք տայ նց. և նք
 զառաջինն մոռացեալ, և զբազումն
 յետ այնորիկ ոչ խոտեն:

Լորեքոտաներդ՝ լինի յաշխատուէց.
 ոպ շինականք և ռամիկք որք միշտ
 յաշխատութիս են. Վսյ և բազումս
 պիտոյ է նց կերակուր: Լճ այս
 ոչ է յայնպիսի մեղաց կարգի՝ ոպ և
 առաջինքն. զի սոցա գոյ պատճառ
 բազում ուտելոյ՝ և նց ոչ: Վս զի
 թէ ոչ ուտեն բազում, ոչ կարեն
 գործել բազում: Իսկ այլքն ոչ ու
 նին զայս պատճառ. Վսյ և մեղք է
 Տամարեալ:

Իսկ թէ յոք գտանի մի՝ի սոցանէ,
 բազում ոճիրս չարութ գործէ:
 'Նախ՝ ոպ ասէ առաքեալն, թէ թշ
 նամի առնէ զմարդն՝ խաջին քի.

զի խաչն քի՛ զնեղուի և զանսո՛ւա
 ղուի քարոզէ : Եւսկ որ զորովայնն
 պաշտէ՝ զուխտս խաչին տեսեալ և
 թողեալ՝ զկնի փորոյն ընթանայ :
 Եւրդ՝ զի զորովայնն ան տայ պաշ
 տել : զի զորօրինակ՝ ան ոք վո՛ւս այն
 աշխատի թէ՛ այ կամքն կատարես
 ցի : Իսկ որովայնամոլն՝ գիշեր և ցե
 րեկ զայն հոգայ՝ թէ որկորս լցո՛ւի
 և մարմնոյս կամքն կատարեսցի : և
 թէ՛ զոր ազգ կրկուր շինեմյայտ
 գիշերի : անկ՝՝ ան տայ պաշտել զո
 րովայնն՝ մոլութիւն : ոպ ասէ առքն
 որոց ան՝ որովայնք իւրեանց են :
 Եւրդ՝ զի զամօթոյսն՝ փառք տայ
 համարել : զի ան ոք ամօթ համարի
 զանպսնոց շատ ուտելն : Եւսկ որո
 վայնամոլն՝ պարծանք զշատ ուտելն
 դնէ և ոչ ամաչէ : վոյ ասէ առա
 քեալն : թէ փառք՝ զամօթն համա
 րին այնպիսիքն : Եւրդ՝ զի զան
 մարդ որ գայ առ իւր հիւր՝ իժամ
 հացին , այնպէս տեսանել տայ ոպ
 զպահանջող հրեշտակն որ զհոգին
 խնդ

խնդրէ • քանզի և նա՛ ուտէ 'ի կե
 րակրոյն զոր ուտէն և մասննր պա
 կասի վն գալստեան եղբօրն •
 Հինգերդ՝ զի զօրէնս անարգել
 տայ այնպիսի մոլորին • զինչ առնէ
 ուտելն աղօթից • Թող կերայց եւ
 ապա արարից աղօթս • և թէ՛ զինչ
 աւելի է նօթի աղօթքն • Արոյ սո
 ղումօն վայ տայ ասելով • վայ քեզ քա
 ղաք որ թէ՛ր քո մանուկ է • զի իշ
 խանքն ընդ առաւօտս ճաշակեն •
 Սեցերդ՝ զի կորուսանէ զանդրոն
 կուծի առաքինուէ • ոպ եսաւ որ
 ծախեաց զանդրանկուին յակոբայ
 վն փոքր ինչ ոսպնաթանի • այսպս
 և որ առաքինի'է պահօք , վերջին
 մոլի լինի 'ի ձեռն կերակրոց •
 Լօթներդ՝ զի աճեցուցանէ զցան
 կուծիս • զի վն այսմ ամ հարքն՝
 զհաց և զջուր հատին յինքեանց •
 զի զախտս հատցեն յինքեանց • Իսկ
 որ անյագ ուտէ , վառէ զցանկու
 թին • Ըմ , գիրացաւ ստո՛ւարացաւ
 լայնացաւ • և ապա եթող զտր ամ •

Աթերդ՝ զի հանէ յածային վայր
 ուցն. ուն զադամ՝ ի դրախտէն՝ որո
 վայնամուտութիւն եհան: այսպէս և որ
 նոյն ակտիւն զանկեալ է՝ թողու
 զվանս անաբնակ և բնակէ ի քա
 ղաքս և ի գիւղս. զի անդ բազում
 գտանի կերակուրս: Աննե՛րդ՝ զի
 խաւարեցուցանէ զմիտս. զի յորժամ
 բազում կերակուր լինի կերել ոք,
 վնայն պարտի բազում ժամ. քնիլ
 և յայնպիսի թմբրուէ գոլով՝ կու
 րանայ միտքն յածային տեսուէն.
 զի որպէս զհայելին ժանկահարէ՝ տի
 նուին, այսպէս և զմիտս՝ բազում կե
 րակուրք: Տասներդ՝ զի դժոխսն է
 տեղիք որկորամուլին. զի ուն մեծա
 տունն որ հանապազ առատ լինէր
 ի յուտելն՝ էջ ի դժոխս: Ասկ աղ
 քատն զազարոս՝ որև ոչ զմասն մի
 փշրանս գտանէր՝ ի գոգն աբրա
 համու հանգեաւ:

Ասկ որկորստուէ դէքն՝ բազում
 չար խորհուրդ արկանէն ի մեղ

Լ նոքօք գործել տան զմեղս :
Եւսիս՝ ասեն կեր և արբ զի անկա
րօղէ առանց պահոց քեզ ողորմուի
առնել : զոր յանդիմանէ պօղոս . ոչ
արբեցօղք և ոչ ագահք՝ զարքայու
թիւնն այ ոչ ժառանգեն :

Եւսիս ասեն դեքն . թէ այսօր տօն
է և պատշաճ է քեզ յագուրդ ու
տել միս և ըմպել գինի՝ որպէս զի
յատկասցի քեզ պահքս և տօնքս :

() որս յանդիմանէ Թոմասն
ասելով . կերի՛ցէք՝ ի վաղիւն միս յա
գուրդ . ոչ մի օր , այլ ամսօրեայ ժա
մանակօք , մինչև դարձցի յըռնկունս
ձեր . և եղիցի ձեզ մաղձ քացախել .
զի ոչ հնազանդեցայք Խնայ ձերոյ :
Եւսիս սողումօն՝ մի՛ լինիր գինարբու .
և մի՛ ձկտիր՝ ի վաճառանոց մսոյ . զի
ամենայն արբեցօղ՝ աղքատասցի և
զգեցցէ՛ պատառատուն :

Եւսիս ասէ դեն . հիւանդ ես դու
և ահա՛ օրէնքն քեզ թոյլէ տո՛ւեալ
զամ ինչ ճաշակել . արդ՝ փութա՛
կեր վաղվաղակի : զոր պօղոս յանդի

մանէ. որ հիւանդն է 'ի ձէնջ' բան
 ջար կերիցէ: Չորրորդ ասէ դենն .
 ծանր է պատուիրան պահոցն և ոչ
 կարես ստուգապէս պահել. և ոչ
 ինչէ օգուտ ձրի պահքն քեզ: զոր
 յանդիմանէ յերկրորդ օրէնքն տրն
 ասելով . պատուիրանքդ այդ զոր
 պատուիրեմք քեզ ոչ է ծանր և ոչ
 հեռի 'ի քէնու և տրն ասէ. առէք ըզ
 լուծ իմ զի քաղցր է . և բեռն իմ
 թեթեւ: Հինգերորդ ասէ դենն . որ
 քան կարօղես' կեր անք . զի 'ի կե
 րակրոյ ոչ ոք վնասի. և ահա այլազ
 գիք օրինակ քեզ' այսանուն պարոն.
 և ոչ ինչ վնասին: զոր յանդիմանէ
 մովսէս յերկրորդ օրէնքն, եկեր յա
 կոբ և գիրացաւ և եթող զտր: և
 առ ջրհեղեղան' պատճառ ուտել
 և ըմպելն եղև: Սեցերորդ ասէ որ
 կորամոլութիւնն . ջանա' թէ ուո
 տի' հոգաս իւղ և մեղր և շաքար և
 գառն. զի այսոքիկ վայելէ քեզ: և
 թէ դու ոչ հոգաս' վս քո ո' հոգաս
 ցէ: զոր մարգարէն խրատէ. ընկեա'

'ի տր զհոգս քո, և նա հոգայ զ".
 Լօթներորդ ասէ դէն. Թէ զի՞ է
 քեզ զի յամես մինչև 'ի վեց ժամ
 և ապա ուտես. ահա՛ ամ երկիր ընդ
 առաւօտս ճաշակեն և ոչ են մեղա
 չորք: Օ որ յանդիմանէ դաւիթ
 յեկդ Թֆրուէցն. զայս ինչ արաս
 ցէ ինձ ամ, եթէ ոչ արև մըտցէ՝
 ճաշակեցից յամ իմեքէ: Լին Թէ
 այս յօրինակն գոյր որ սոսկ մար
 մինքէին՝ քանի՞ ևս առաւել 'ի նորս
 և 'ի ճշմարտութիս պարտիմք պահել:
 Եթերդ ասեն խորհուրդք. Թէ
 ահա՛ սով դայ և ոչ ունիս այնչափ
 կերակուր. այլ երթ հաց ժողովեա՛
 և խորտիկս. զի և 'ի ժամու սովուն
 ոչ ոք տայ քեզ: զոր խրատէ մար
 դարէն. մանուկ էի ես և ծերացայ
 և ոչ տեսի զարդարն արհամարհել.
 և ոչ զզաւակ նր Թէ մուրանայ հոգ.
 Խններդ ասեն խորհուրդքն. մի՛
 այդպէս առաւել պնդել 'ի քեզ ըզ
 պահքս և զնեղութիս զի անչափն
 ոչէ յօգուտ: զոր մարդարէն ստէ՛

զնա ասելով. վաստակեա՛ւ և կեցցես
 մինչ իսպառ: Տասներորդ ասեն.
 եղուկ է քեզ զի աստ միայն բան
 ջար ոչ գտանես. իսկ յայս անուն
 տեղի՝ գեղեցիկ խորտիկս ուտեն
 և են անունանի. և ամբեան գան
 առ նս: զոր յանդիմանէ սողմոն.
 լա՛ւ է պատառ մի հաց համով խա
 ղաղուք. քան թէ տունք լի մեծա՛ւ
 և անօրէն զենլովք. կռուով և չար
 գործով: ՍԵ՛րտանդ ասեն դէքն
 ՚ի հակառակակողմն. զի արդ նստիս
 դու առ ընկերս քո և դու դոցին
 կարօտանաս. արի՛ գնա՛ ՚ի յանապատ
 և փոքր մազեղէն ագիւր ե՛ւ վայրի
 բանջարովք շատացիր. զի եղեցիս
 և սառա՛ւել առաքինի քան զընկերս
 քո և անունանի: Օ՛ր սըտէ՛ սողո
 մոն. մի՛ կարի արդար լինիր. և մի՛
 ճարտար յաջս անձին քո. զի մի՛ հե
 ռացուսցես ՚ի քէն զերկիւղն աջ:
 Երկտաներդ ասեն դէք. ահա՛ ար
 ժան է քեզ առ մայր քո բնակել և
 առ եղբարս. զի նոքա գեղեցիկ
 խոր

2542.60

(20202-60)



խորտիկս շինեն . և զհարդ զքոյնն
Թողեալ՝ զայլոց ուտես զհաց ցաւ
ոց : զոր մարգարէն միքիա յանդի
մանէ . արի՛ գնա՛ ասէ զի աստ ո՛չ
գոյ քեզ հանգիստ : Եւ Թորն ասէ .
որ ո՛չ եթող զհայր և զմայր , ո՛չ է
ինձ արժանի : և ո՛չ եթող զայրն՝
Թաղել զհայր իւր :

Երեք տաներդ ասեն դեք . Թէ դու
'ի տղայութեն 'իքո հօր տանն ու
րախ էիր : և սեղան բազմալի գոյր
քեզ : ո՛չ ապաքէն այն լաւ է քեզ
քան զբազում կարգս քահանայւն :
զոր ստէ մրգրէն ետայի . վայ որ ա
սեն զչարն բարի կամ զբարին չար
զբաղցրն դառն և զդառն քաղցր .
զխաւարն լոյս և զլոյսն խաւար :

Չորեք տաներդ ասէ դեն . Թէ պէտ
յագեալ ես հացիւ , սակայն պի
տոյէ զի ի վրայնմ պտուղ քաղցրա
համ կերիցես եւ քաղցրացի կո
կորդ քո : այնպիսին ո՛չ միշտ զդա
նիէլ . որ 'ի տան Թգնորին՝ ընտովք
շատանայր : և ահա՛ պայծառ էին

երեսփ նր քան զընկերաց նորա :
 Հնգեմաներդ ասեն դւբ թէ ոչ
 ուտես յադ հաց և միս : հպարտա
 նաս և կորնչիս : և զինչ օգուտ է
 քեզ յոչ ուտելն : զոր եզեկիէլ սը
 տէ . թէ հպարտութի 'ի կերակրոյ
 անտի գայ : ոպ ասէ՝ բայց այս էին
 անօրէնութիք սորօմայ քեռ քո :
 հպարտութի յագուրդ հացի և ու
 րախութի գինւոյ : Ս եշտասաներդ
 ասէ խորհուրդն : ուսումն կամիս
 ուսանել . թէ ոչ ուտես խելքդ
 ոչ կարէ տանել բազում ասելոյն .
 և խելագարեալ կորնչիս : զոր արն
 ասէ : նեղ և անձուկ է ճանապարհն
 որ տանի 'ի կեանս : և սակաւք են
 որ գտանեն զնա : Լաթնւտասներդ
 ասեն դւբն . թէ այդ մի խնձորդ
 և փոքր մի արծաթդ : ոչ է քեզ և
 այլոց բաւական . զայդ առանձին
 քեզ պահեա՛ , զի լաւ է մի լցեալ
 քան զբազում թերի : զոր 'ի գործքն
 յանդիմանէ ասելով . ամ հաւատա
 ցեալք որ 'ի մի վայր էին՝ եր սիրտ
 և



Լ անձն մի. և զամ ինչ հասարակաց
ուսնէին. և ոչ ոք ասէր զընչից իւ
րոց թէ իւր իցէ: Ու թե թերորդ
ասեն խորհուրդք որկորամուռէ.
քեզ վայելէ նստիլ. զի ասա՛ ամե
նեքեան վս քո աշխատին և բերեն
քեզ կերակուր: զոր պողոս յանդի
մանէ. ձեռք որ ոչ արասցէ՝ կերի
ցէ մի: և մրդերէն՝ զվաստակս ձե
ռաց քոց կերիցես ասէ:

Ունե թերդ ասեն դեքն. բա՛ւա
կանէ արդ պահքն զոր պահեցեր.
այժմ՝ դարձլ փոքր փոքր ինչ ճաշա
կեա՛ զի մի՛ նուաղեսցիս: զոր առա
քեալն ստէ. թէ մարմնոյ խնամ մի՛
տանիք ՚ի ցանկուիս. և թէ՛ որքան
արտաքին մարդս մեր ապականի,
ներքինն նորոգի: Քսաներդ ա
սեն դեք. թէ դու յաշխարհի ես
և զիմորդ կարես ՚ի վարուց արտա
քոյ կեալ. արդ՝ որք ՚ի յաշխարհի
են, ուտեն և ըմպեն և ապա ապ
րին. նոյնպէս և դու արա. և զոր
ինչ նոքա լիցին՝ և դու ընդ նս:

Օ որ 'ի կաթողիկէն՝ յակոբոս յան
դիմանէ. ոչ գիտէք ասէ թէ սէր
աշխարհիս՝ Թշնամութի է առ անձ,
և որ բարեկամ լինի Ծի, Թշնամի
լինի անյ:

Պարճլ՝ նմանի որովայնամոլն զօրա
կնի երկչոտի՝ որ սարսի յորժամ ըզ
փող պատերազմի լսէ. այսպէ և որկո
րամոլն երկնչի 'ի քարոզելն զպահ:

Պարճեալ նմանի հեղդ ճանապար
հորդի՝ որ ոչ հասանի 'ի շէնն ալ
արտաքոյ մնայ. այսպէ և որկորամոլն
ոչ հասցէ 'ի շինութի կենացն յա
նիտենից: Պարճեալ նմանի միգի՝
որ ծածկէ զճառագայթս արեգա
կան. այսպէ և որկորամոլութիւն զմիտս
խաւարեցուցանեն: Պարճլ նմանի
կորդացեալ երկրի՝ որ փուշ բերէ
անդադարապէս. այսպէ և միտք որո
վայնամոլին բուսուցանեն զխոր
հուրդս զազիրս: Պարճեալ նմանի
փայտից բազմաց. որ 'ի հուր անկել
մեծ բոց արձակեն. այսպէ բազում
կըկուրք սնուցանեն զքանկութիս:

Վճլ նմանի երիւարի որ բազում
 ուտէ և ոչոք կարէ զերպասանակ նր
 բարշել. այսպէ և զբազմակուլն ոչ
 ոք կարէ դարձուցանել ՚ի մեծ կո
 րըստենէ. Վարձեալ նմանի հրոյ՝
 որ ոչ երբէք յագի խռով. և որ
 մոլեալ է ՚ի կորուստ, ոչ ասէ թէ
 բա՛ւական է: Վճլ նմանի ծովու՝
 որ յամ վայրէ գետք առնա ընթա
 նան և նա ոչ լնու. այսպէ և որովայ
 նամոլն ոչ բա՛ւականանայ ամ վայ
 ելջական կերակրովք. Վարձեալ
 նմանի հնոցի բաղանեաց որ միշտ ՚ի
 վառէ և ոչ ինչ առա՛նելու ՚ի նա.
 բայց միայն մոխիր: այսպէ և որկորա
 մոլն ոչ ինչ գտանէ աստ. բայց
 միայն զբազմութիւն աղբիցն.
 Վարձեալ նմանի հոտեալ շան.
 որ միշտ գարշ հոտ գայ ՚ի նմանէ.
 այսպէ և բազմակուլն միշտ յօրանջէ
 և գարշահոտն ընդ բերանն ելանէ
 և մերձակայքն ձանձրանան:
 Եւ և ՚ի մեռանիլն՝ որդանց է կե
 րակուր մարմինն այն և լուցիկ հը

րոյ. զի ճենճք բորբոքեն ղՏուրն,
 և մարմին որկորամուլին զգծոխս վա
 ռէ: Եւ ի ճանապարհս ոչ կա
 րէ այնպիսին երթալ զի ծանր է
 մարմնով. և հեծայ և տքայ ուն ըզ
 խողս: Եւ մինչդեռ յառնէ ի ննջ
 մանէ, քացախեալ է բերանն. և այլ
 բազում աղտեղութեամբ լցեալ:

Յորմէ զերծուացէ զմեզ Բն
 յոյսն մեր:

Եւ ի բազում կերակրոց յըզ
 փացեալ և բազմացեալ ախտ՝ ջա
 նայ ելանել. վասնորոյ սկսանին նո
 քա ի պոռնկութի: Յազագոս որոյ
 և զհետ որկորստութեն զպոռնկու
 թիւնն դասեաց: Իսկ թէ ոք զկե
 րակուրն հատանէ, նա ոչ պոռնկի
 ամենեւին:



* Ո՛չ շունս՝ ոչ պոռնիկս՝ չարսայո՞ւնին
այ ո՛չ ծառանգէն ասէ պօշոս:

Յաշագո Պոռնիկո՞ւնէ:

Գլուխ Ռ:



ՍԿԸՅԺՄ ԳԻ

տացեալ զորկորամուլուն
և զպատճառ նորին և ըզ

ներգործութիս նմին, այսինքն գի
տասցուք և զպոռնկութիս:

Եւ նախ գիտելի է, զի շունն և
պոռնիկն զանազանին: Օ ի շունն
այն է որ ոչ ունի իւրն օրինաւոր
կին. և ուր և հասանէ՝ չար գործէ:
ոպ և տըն ասէ՝ որ հայի ՚ի կին մի
առ ՚ի ցանկանալոյ նմա, անդէն շը
նացաւ ՚ի սրտի իւրում: Իսկ պօռ
նիկ նա է որ զիւր օրինաւորն թո
ղու և ընդ այլոյ խառնակեացի:

Վարձել՝ շուն նա կոչի որ յաւեր
տուն մտանէ անամօթաբար, իսկ
պոռնիկ՝ որ երկու կին շարաբեալ,
և դարձեալ առնէ: Վաճ՝ շուն և
պոռնիկ կոչի համանդամայն նա,

որ յանվայելուճ տեղ երթայ: որպէս
թէ թիւր ոք երթայ ընդ դողոյ:
վնրոյ և մարգարէն ամբաստանէ:
չնայր եհմ և պոռնկէր սամարիա:
իբր՝ զան թողեալ՝ կռոց երկիրպա
գին: Պարձեալ՝ պոռնիկ ոչ զայն
պիտին ասէ որ ՚ի բազում կանայս
յաճախեալ լինի, այլ զայն ասէ որ
բազում և ազգի ազգի և պէս պէս
մարմնոց ցանկալ տայ:

Եւ այսպիսի խորհրդական դեւ
բազում ոճիրս չարութե առնէ:
Նախ՝ զի ՚ի վերայ հաւատացելոց
քրիստոնէից յառնէ և ոչ անհաւա
տից զի անհաւատք նր են: Վնջ և
ընդ պատերազմիս իւր՝ փոյթ պա
տերազմի: Եւրկրդ ՚ի մէջ հաւատա
ցելոց զմեծ առաքինութե զարդա
րեալն՝ առանել ջանայ կորուսա
նել: զինա կորուսիչ սատանայի ա
ռաքինութե իւրովէ: Եւրդ՝ զա
ռաջնորդս ջանայ կորուսանել: Թէ
և կարի գիտուն է և վարդապետ:

Եւ այս վնջ բազում պատճառի:

'Նախ' զի նոքօք զհաւատապէլ ժողո
 վուրդն գայթաղեցուսցէ. զի թէ
 և ժողովուրդն 'ի մեղս գողով ոչ
 այնպէ կորնչին որչափ զառաջնորդն
 տեսեալ 'ի սակաւ մեղս' գայթաղ
 զին անբժշկելի: Վսյ տրն վայ տայ
 գայթաղեցուցանողին: Ահդ' զի
 յուսահատեցուսցէ զայլն որ ջա
 նան նոր առաքինութի ստանալ.
 զի զնս այնպէս տեսեալ՝ անօգուտ
 համարեսցին. լռեսցեն և ինքեանք
 յառաքինուէ: Արդ' զի նախ ցան
 կութք ամ մարմնոյ՝ զողիսն պղծել
 տայ. վսրոյ և 'ի հարկէ զմարմնսն
 պղծեն: Չրդ' զի զինքն զցանկա
 ցօղն՝ պատերազմօղ ինքեան յարու
 ցանէ. վս զի ցանկացօղն 'ի յայլմէ
 շարժի յախտն. իսկ որ զամ ցանկու
 թիս մարմնոյ ունի, ինքն զինքն շար
 ժէ: Հինգերդ' զի զոր ինչ կամի
 այնպիսին ուսանիլ, յամում արկա
 նէ զայս ախտ. զի յամ գիտութիս
 նախ զայն ուսցի և ապա զայլն:
 Սեցերդ' զի ջանայ դէն որ ամ
 մարդ

մարդ որ մերձ նմա նստի, յայնպիսի
 խորհրդոց խօսիլ տայ, զի զչարն
 լուեալ հաստատեսցի 'ի պղծութիւն,
 Լաթներդ՝ զի հանապազ նկարէ 'ի
 միտս այնպիսոյն զգործելոյն՝ իբր
 թէ գործեալ լիցի և փութայ մար
 մնով կատարել: Ութերդ՝ զի միշտ
 շոշափել տայ զարական անդամս. զի
 նա և սառաւել յորդորէ 'իցանկու
 թիւն: Ըններդ՝ զի ջանաց զընկերա
 կից այսպիսեացս մերձ նմին ածել.
 զի թէ հեռագոյն լինին՝ հարկիւ
 դադարին ախտքն: Տասներդ՝ առ
 անձին առնէ. ուստի 'ի հարկէ այսմ
 ամի լինի գործն կատարեալ:
 Եսկ այսոցիկ պատճառ՝ Եւսի ըզ
 ցան և զքիր միտսն ասեն լինիլ.
 որև զբաղեալ է յիմարութիւն իբրև
 զվայրենացեալ, և հարկիւ 'ի քար
 ինչ գահավիժին: Եւրդ՝ զանառաջ
 նորդն ասեն և զանուսուցիչն.
 քանզի ասէ նեղոս՝ երիտասարդ որ
 ոչ է առ ոտս ծերոց, անջան որս է
 սատանայի: Եւրդ՝ զմանկուե տիսն

ասեն. զի այն հասակ շարժման ասի
 ասի է. և յայտէ 'ի ծերսն որք ոչ կա
 րեն առնել. և ոչ խորհրդին իսկ:
Չրդ՝ լինի 'ի մերձաւորութէ կա
 նանց և այլոցն: Վայ և սբն ներսէս
 վանս շինեալ՝ միանձնացեալ ասէ լի
 նիլ 'ի յայնմ շարժունածոց:
Հինգերորդ՝ լինի 'ի կերպարանաց
 մարմնական գեղեցկութէ. զի ոպ
 նետ սրեալ մտանէ 'ի սիրտս մար
 դոյ. և նա'է սկիզբն աստին շարժ
 ման: **Վ** եցերդ՝ ընկերակիցք չարք
 լինին սլատճառ. հարկին և ինքն
 ըմբռնեալ 'ի յախտս կորնչի: զի ը
 սրբոյն սբ եղիցիս ասէ մարդրէն.
 և ընդ թիւրսն կործանեսցես:
Լ օթներդ՝ ոչ դադարեւն 'ի տեղը
 ուրեք. այլ աստ և անդ շրջելով,
 'ի միւս տեղն կատարի անյապաղ:
Ութերդ՝ փախչիլն յընտանեաց և
 սէր վաստակոց օտարաց. վսրոյ և
 յայն սակս կորնչին. զի օտարք են
 որ չարին դործակից լինին:
Ի ննեցորդ՝ ուտելն և ըմպելն եւ

ձայնք գուսանաց և երգոց և խա
ղուց . որք և հարկի՛ն ըմբռնին 'ի
յախոս չարաչար :

Եւ գիտելի է , զի այս մեղքս ծան
րագոյն է քան զամ մեղք :

Եւախ ըստ առաքելոյ , ամ մեղք
արտաքոյ մարմնոյ գործի . իսկ որ
պոռնկի՛ յիւր մարմինն մեղանչէ :

Եւ սա կրկնակի է : Եւախ՝ որ 'ի
կինն ոք մերձենայ՝ նորին մարմնոյն
պակասէ 'ի բնութեն . և ապա որ
արտաքոյ բնութեն շարժի , յիւր
մարմինն մեղանչէ . զի նոյնպէս մար
մին է առ որ գործեաց զչարխան :

Երկր՝ զի ամ որ պոռնկի , 'ի հար
կէ ամաչէ ինքն ըստ ինքեան . զի
այս մեղք միայն է յամ մեղաց որ զա
մօթ ընդ ինքեան ունի : որպէս ասէ
երեմիա՝ ամօթով եմք առաջի քո .
և մեղք մեր՝ բարձրացան ի վեր քան
զգլուխ մեր : Երրորդ՝ զի ամ որ
պոռնկի , ոչ երբէք անկանի այն
գործ 'ի մտացն . զի այլքն 'ի մի ժա
մու լինին , իսկ սա 'ի քուն լինիլն

և սառաւել յաճախէ. ուն ասէ առա
 քեալն՝ որ պոռնկին, ՚ի գիշերի պո
 ռնկին: **Չրորդ՝** զի զամ ինչս իւր
 ծախէ վս այն չարեացն. և աղքա
 տացեալ՝ յոչինչ համարի զկորուստ
 ընչիցն ուն ասէ սողումն. այլ և աղ
 քատաց բազում անգամ հանդիպի
 և յոչինչ համարին զայլ պակասու
 թիս իւրեանց: **Հինգերորդ՝** զի ու
 րանալ տայ զհայր և զմայր և զամ
 ազգատոհմն. այլ և զսիրելիսն և
 զխրատօշն՝ արհամարհելի ցուցա
 նէ յաչս նց: **Սեցերորդ՝** զի զամ
 հեռացուցանէ ՚ի նմանէ. որն առ
 սամփսոնէ տեսանել. ուն ասէ գիր
 թէ ասէ սամփսոն՝ թէ ելից արա
 լից ուն յերեկն. և ոչ գիտէր թէ
 հեռացեալ էր ՚ի նմանէ ամ:

Եւթներորդ՝ զի խելագարի մարդն
 ՚ի գործս յայս՝ թափեալ ՚ի մտացն.
 ըստայնմ, ոգիք ըմբռնեալք ՚ի մեղս
 ՚ի մտաց ևս անկանին: **Ութերորդ՝** զի
 զհոգին որ է երկնային՝ երկրային
 և մարմին առնէ. ըստայնմ, մի՛ մը

նասցէ հոգի իմ ՚ի դոսա, վս լինե
լոյ դոցա մարմին: Իննեքդ՝ զի բա
զում մարդասպանութիք և կռիւք
և անձին կորուստ եղեն վս այսմ:
ոպ և զամոն եսպան աբխսողոմ զեղ
բայր իւր վասն քեռ իւրոյ Թամա
րայ: այլ և ՚ի դատաւորքն գրեալ է՝
որ զցեղն բենիամենի, վս այս կո
տորեցին երկոտասան ցեղքն: և
այլք բազումք: Տասնեքդ՝ զի յար
քայուէն այ հանէ զմարդն: ոպ ասէ
առաքեալն՝ ոչ շունք, ոչ պոռնիկք
զարքայութին այ ոչ ժառանգեն:
ամլ" մեծ է մեղքս այս:

Ինայց աստ է տարակոյս ինչ:

Թիէ վասն էր օրէնքն զամ մեղս
Թողու և հրաման տայ պատրդեւ
բահանային: իսկ զպոռնիկութի
ղու, բայց ոչ տայ հրաման պատա
րագեւ: Եւրդ՝ եթէ զմեղքն Թո
ղու կատարեւապէս, ապա ուրեմն
արժան է պատարագեւ իսկ Թէ ոչ
Թողու, յայտէ Թէ և ոչ զայլ մեղսն
Թողու: որ է հերձուհաւ:

Լ յամ պատասխանեն ոմանք եթէ
 որքան բնութին ողջ էր քահանային,
 արժան էր պատարագել իսկ ՚ի պո
 ռնկերն՝ պակասեցաւ բնութին .
 վնյ թէպէտ զմեղսն թողու խոստո
 վանութին, այլ բնութին ոչ է կա
 տարեալ ոն զառաջինն, վն որոյ և
 ոչ տայ հրաման պատարագել Լն
 այս ոչ է բաւական պատասխանի .
 քանզի և Նի քահանայն պատարա
 գէ և պակասեալ է բնութին .

Լ յլ ոմանք ասեն՝ թէ զգուշացաւ
 օրէնքն յեկեղեցւոյ . վն զի որ պո
 ռնկին, առ ժամայն զղջան . և թէ
 հրաման տայր պատարագի, վաղիւն
 սովորութե գործն ՚ի միտն անկա
 նի և դարձլ անդրէն դառնայ ՚ի
 փոխածն . և այս յանբաւս . և այնու
 ճետե լինի եկեղեցին պոռնկա
 տուն . վնյ արգել ՚ի պատարագէ .
 զի միշտ ՚ի կարօտութ պատարագին,
 յարտասուս կացցեն և ապարեացին
 ՚ի մեղացն Լն այս ևս ոչ է բաւ
 ական պատասխանի . քանզի և աշ

խարհի քահանայն միշտ 'ի փսխածն
դառնայ և պատարագէ . Թէպէտ
և օրինաւոր է :

Լ. յԼ ես ասեմ , Թէ զորօրինակ
ուխտադիր լինիմք այ 'ի ժամ վե
րստին ծնընդեանն՝ կրելով զմահ
վս անուանն քի . իսկ Թէ ոք ուրա
նայ զայն ուխտադրութիւն , ուրա
ցեալէ առաջի այ ըստ տն բանի :
Լ. յսմս և 'ի ժամ քահանայութեն
եկեալ նոքա որ Յի քահանայ կա
մին լինիլ . և որ աբեղայն՝ կուսութ
քահանայանալ : և ուխտ եղեալ
քի՝ Յին , Թէ ողջախոհութե ծա
ռայեցից քեզ մինչև 'ի մահ . և աբե
ղայն՝ Թէ կուսութե սպասաւորե
ցից քեզ մինչև 'ի մահ : Ս. այ Յի
քահանային սբ է անկողին ըստ ա
ռաքելոյ և պատուական ամուսնու
թին . զի ոչ ուխտեաց արտաքոյ կալ
յայնմ գործոյ . իսկ աբեղայն ուխ
տեաց քի՝ սրբութե կուսութեն
սպասաւորել . վս և որքան կայ 'ի
կուսութիւնն , պատարագէ միշտ .

և յորժամ հատան շաղկապն, թէ
 պէտ և առողջանայ ՚ի ձեռն զբղ
 մանն, այլ ո՛չ ունի զայն շաղկապն
 այսինքն զկուսութիւն որով մերձե
 նայրն առ տր: յաղագս որոյ՝ արտաք
 սի՝ յայնմ գործոյ: Այլ և անառակ
 որդին՝ զի ընկալան զնա հայրն և
 զամ ինչ շնորհեաց նմա, բայց
 զեզն պարարակ՝ ոչ ետ զենուլ նմա
 այլ լինիլ ուրախակից նմա:

Ս. յլ որ ուրանայ զայս ուխտ,
 պիտոյ է նմա դառն արտասուս
 ու պետրոսին. թերևս հասցէ այնմ
 ուխտոյն՝ որ հայի միայն յերեսն քի
 Օ ի որ զմարդկան ուխտն հատա
 նեն՝ այլ ոչ կարեն գալ յերեսն նց
 գիտելով զկրեանքն ուխտազանց
 քանի՜ և սառնալով որ քի եղեալ է
 ուխտազանց՝ ոչ է արժան համարձա
 կիլ ՚ի սբ խորհուրդս նր: քանզի
 լս սորա ասէ առաքեալն. փորձես
 ցէ մարդ զանձն իւր և ապա ՚ի հա
 ցէ անտի կերիցէ և ՚ի բաժակէն
 արբցէ: Օ ի զի՛նչ օգուտ է այժմ

ի փոքր ժամանակս պատարագօղ
երևիլ՝ անարժան պատարագելով
զքս՝ և զդատաստան անձինն՝ ընդ
ոսկերսն խառնել՝ որոյ ոչ գոյ ճար
ելանել մինչև ամ ոսկերքն մանրես
ցին ի դոմստնի յաւուրն ահեղին :

Իսկ պոռնկութե դէն՝ բազում
խորհուրդս չար՝ որոգայթ և կապ
դնէ մեզ զորս ոչ է արժան ընդու
նիլ այլ լուծանել անային բանիւ :
Եւսի ասէ, զինչ առանել է կին
ընկերին քո քան զքոյնն, քանդի
նոյնպէս մարմին է և նորայն, և ոչ
ինչ զանազանութի է ի մէջ քոյոյն
և օտարին, արա՛ զոր ինչ կամիս :

Ո՛ր անարգել ի տասն բանսն
ասելով, մի՛ ցանկացես կեռջ ընկե
րի քո՝ վս՝ զի կինն՝ կէս մարմնոյ է
ընկերին ըստ անային զուգելոյն,
արդ եթէ ընդ կինն խառնակիս,
այնպէս համարեալ է ոպ որ արտա
քոյ բնութեան գնայ :

Երկրէ՛ դէն զխորհուրդս պոռն
կու

կուլթէ պահել տայ մեզ և ճնացու
 ցանէ . և օրըստօրէ յաւելցնէ . և
 ասէ՝ մի՛ խոստովանիր . և այդ ո՛չ է
 մեղք . զոր դաւիթ անարգէ զայս
 պիսի խորհուրդ . ասէ՝ ՚ի բաց կա
 ցէք յինէն ամբեան ոյք գործէք
 զանօրէնութիւն . Եւրդ ասեն մեզ
 դեքն՝ ոչ կարես Եւ դիմանալ դու
 պատերազմի դիւաց որ վս պողըն
 կուլէ զի յոյժ զօրաւոր են . Օ որ
 դաւիթ զօգնականն ցուցանէ ա
 սելով . եղիցին նոքա ոսկի փոշի առա
 ջի հողմոյ և հրեշտակ տն նեղեացէ
 զնս . և՛ հրեշտակաց պատուիրեալէ
 զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն
 քո . բայց ՚ի քէն միայն զմտաց զըզ
 ունելն խնդրէ . Եւրդ ասեն դեք .
 այս ինչ անուն կին՝ քո երախտա
 ւոր է . մօտ առ նա կաց զի մայր
 քո անուանեալէ . Օ որ հեռացու
 ցանէ սողոմօն ասելով . մի՛ կանխեր
 դու առ օտար անդր . և մի՛ զանգա
 նիր ՚ի գիրկս որ ո՛չ է քո .
 Նինգերդ՝ զի Թէ դարձեալ ոք ՚ի

պոռնկուէ, ասէ դեն, զի՛նչ լինի
 թէ դարձեալ գործես. զի նոյն
 գործն է զոր յայնժամն արարեր,
 և մեղքն այն է զոր յառաջն արա-
 րեր: Աոր իմաստունն և առաջին՝
 ՚ի շուն և ՚ի խոզ առաւելն ասելով
 շունն դառնայ ՚ի փոխած իւր, և
 խոզ լուսնցլ Ը տիղմն թաւալեալ:
 Ս եցերդ ասեն դէքն՝ ահա այս
 անուն մարդ պոռնիկ էր, և սողո-
 մոն բազում կանայս արար իբրեւ
 զհազար. դու այլ արա՛ զի ոչ գոյ
 փասս: Օ որ սողովոն ասէ. մի՛ հայիք
 յիս՝ զի ես եղէ թխացեալ. քանզի
 խեթիւ հայեցաւ յիս արեգակն, և
 մրդրէն՝ մի՛ նախանձիր ընդ չարսն.
 զի չարք վազվազակի սատակեսցին
 Լաթնե՛րդ ասեն դէքն՝ թէ ան-
 զպատկերն վն տեսութե է ստեղ-
 ծեալ զի տեսցեն և փառս տացեն
 ստեղծողին. և դու ընդէր յամես.
 ահա այս անուն գեղեցիկ կին է.
 տես զկերպարանս նր և զուարճա-
 ցիր: զոր տըն ասէ՝ մեղս մեծ ցու-

ցնելով զայս. որ հայի ՚իկին մարդ"
Աթերդ ասեն դւք՝ Թէ գործէ
զայս ինչ չար. զի սատանայ ոչ է
ծածկագէտ և զիարդ տեսանէ զի
ծածուկ գործես. Օ որ պետրոս
մերձ ասէ լինիլ. արթուն կացեք
և հսկեցէ՛ք զի ոսոխն ձեր սատա
նայ իբրև զառիւծ գոչէ. շրջի և
խնդրէ Թէ զո՞ կլանիցէ:

Իններդ ասէ դէն պոռնկութե,
Թէ բազում պոռնիկ կայ յձի և
Թէ դու այլ լինիս՝ ոչ կարէ գի
տել ան յայնքան բազմութե միջի
զքո գործքդ: զոր մարգարէն յան
դիմանէ. զանգործս իմ տես": Իսկ
Թէ զանգործսն գիտէ, անլրեմն
և զգործեալսն ոչ մոռանայ:

Տասներդ ասէ՝ ոչինչ շահ գոյ ՚ի
կուսութեդ. զի զայն անդամ վս
գործոյէ ստեղծեալ ան և զկինն,
զոր տրն բաժանէ զժառանգորդս
արքայուէն ասելով. են ներքենիք
որ զանձինս իւրեանց արարին ներ
քենիք վս արքայութեն ան. ուստի

յայտ է թէ նորա ժառանգեսցեն

զարքայուին այ որք պահեն:

Եւ նմանի պողնկասէրն ալ
եաց ծովու որ ոչ տայ դադարումն
նաւին ի տեղոջ ուրեք հաստատուն
կալ. այսպէս և որ զպողնկուէ ակուն
անթողելի ունի, ոչ դադարի միտքն
ի բարեգործութեան տեղիս:

Վարձեալ նմանի թուանից օձից .
զի յորժամ խածանէ զմարդն , և
ինքն կորնչի . իսկ թոյնքն ինքնին
կորուսանէ զխածեալն : այսպէս և
որ ի պողնկատուն մտեալ , էառ ի
թուանից բանսարկուն . և այնուհե
տե ոչ ապրի անձն նորա:

Վարձել նմանի պողնկին՝ անշէն
զօրականի. որ մերձ ընդդէմ թշնա
մոյն կայ՝ և ամ նեաք նորա ի կողս
նր շարին: Եւ յսպէս և որ առանց
առաքինութե զինուց մերձաւորի
կանանց: Եւ շաջին նեան որ խոցէ
զսքան՝ հախցունաժք կնոջն որ իխո
նարհ ունի. և խօսքն հեզաբար. և
արտասուքն ողորմ. և յոգոց հա

նելն դառնապս . և հարցումն վն
պարկեշտութե . և ունկնդրութի բա
նից : Եւ ապա ՚ի վեր հայելն , և
տեսանել զերեսն , և երևեցուցա
նել զինքն . և ապա զարդարանքն
պոռնկական , այսոքիկ նետ են որ
խոցեն զառաքինին :

Պարճել՝ նմանի ծառոյ որ մերձ է
ջրոյ զի փոյթ աճէ . այսպէ և որ մերձ
է կանանց տեսութե , փութով աճէ
ախտ ցանկութե : Պարճեալ նման է
սառուցեալ ջրոյ . որ երբ ջերմութիւն
յինքն հասանէ , փութապէ թուլա
նայ պնդութի նր : այսպէ պոռնիկն
երբեմն կամի զինքն պնդել զի մի
ևս գնացիւ ընդ այն ճանապարհ
իսկ սովորական ախտ և գործն հա
սեալ , իսկոյն թուլացուցեալ զպըն
դութիւնն ՚ի յերկիր ընկենու :

Պարճեալ նմանի առն՝ որ ՚ի վիհ
ինչ՝ սպիտակ ինչ տեսցէ՝ գիտաս
ցէ թէ արծաթ է . և բազում չար
չարանօք իջեալ ՚ի խորն և տեսեալ
ջուր ինչ ժողովածոյ . որ և յետս

Դառնալն դժուարինէ։ Այսպէս և
 պոռնիկն գիտէ թէ բազում շահք
 են մեծ ՚ի գործն այն . և աշխատի
 մտօք և խորհրդով . և ՚ի հասանել
 գործոյն՝ զղջանայ եւ՛ դժուարաւ
 ելանէ ՚ի խորխորատէ անտի։

Պարձել՝ նմանի մարդոյ որ անհը
 մուտ է լողորդութե . և տեսանէ
 զլողորդսն . ապա փութով անցեալ
 նախանձի և ձգէ զինքն ՚ի գետն և
 առժամայն խեղդի։ Այսպէս և որ
 անփորձ է պոռնկութե, գիտէ թէ
 ոպ մուտն հեշտ է պոռնկութե գոր
 ծոյն, և ելանելն ևս նոյնպէս է .
 և ջանայ փութով կատարել . և առ
 ժամայն խեղդի ՚ի գիջուէց ակտից
 ցանկութե . որ անթողելի բմբռնէ
 զնա։ Յորմէ ազատեսցէ՛ զմեզ
 Վսն ամեն մեր։

Իսկ որ պոռնկի, հարկիւն ինչս պի
 տոյ է զի ծախեսցէ վս պոռնկու
 թեն։ Այս յետ պոռնկու
 թեանն՝ դասեաց զար
 ծաթսիրութին։

* Լ՛ըմար առնայն Ռշայ՝ արծաթսիրո-ւի է
ասէ պօղոս : Յորում ոմանք ճշորեցան
ի հաւատոց անոք :

Յաշագս Լ՛ըծաթսիրութեան :
Գլուխ Գ.



Թ ՏԵԼԻԼ՝ Թ. Թ. Թ.
արծաթսիրութիւնն ո՛չ
միայն զայն ասէ որ զար
ծաթն սիրեն, այլև զոր ինչ արծա
թով գնուի՝ զնա սիրելն արծաթ
սիրութիւն : Գրձ զնս արծաթասէր
ասէ՝ որք ո՛չ թէ կարասի բազում
ունին ՚ի տան ինքեանց և զայն սի
րեն, այլ զայն՝ որ զամ արծաթ կա
մի ՚ի յինքն ամբարել :

Եւ որ այսմ լինի բազում ոճիրս
չարութեան առնէ :

Նախ որ արծաթասէր է, հարկիւ
գող է և յափշտակող : զի թէ ոչ
յափշտակեն և ոչ գողանան, ո՛չ կա
տարի ցանկութիւն իւրեանց :
քանզի ո՛չ ունել ՚իբնէ և անաշխատ
որ և արծաթասէր՝ գող է :

ԼԵՐԻՐԴ՝ զի զամ մարդոյ սիրտ և
 զսէր հատանէ՝ յինքենէ. զի որ զար
 ծաթն սիրէ՝ զեղբայր իւր ատէ։
 ԼԵՐԻՐԴ՝ զի խիղճ մտացն բարձեալ է
 արծաթասիրին. որպէս և յուրա՝ զի
 կուրացաւ միտքն յախտէ անտի և
 ոչ իմացաւ թէ զած ծախէ ընդ
 երեսուն արծաթի։ Չորրորդ՝ զի
 յակամայ կուսպաշտ է արծաթա
 սէրն և ոչ գիտէ. որպէս ասէ մրգրէն
 կուռք հեթանոսաց՝ ոսկի և ար
 ծաթ են։ Վնորոյ և որ զնա՝ սիրէ,
 նմին և ծառայէ։ որպէս և իմաստա
 սէրն ասէ. զոր ինչ ոք աւելի սի
 րէ, նա է անծ իւր։ Վնորոյ և առա
 քեալն ասէ. ագահութիւն՝ որ է
 հաւաստի կուսպաշտութիւն։
 Հինգերորդ՝ զի ոչինչ համարի ըզ
 մարդասպանութիւն արծաթասէրն.
 որպէս յայտ է յաւաղակոն որք ի
 կիրճս ճանապարհի նստեալ՝ սպա
 նանեն զբազումս վն սակաւ ար
 ծաթոյ։ Վեցերորդ՝ զի նա է արմատ
 ամ չարեաց. որով և զամ ինչ զոր
 կա

կամին առնէ. զի ամ ունկն արծա
թոյ լո՛ւիցէ ասէ սողումօն :

Լօթնէրդ՝ զի 'ի նեղութե ժամու՝
զմահ ոչինչ համարի վո՛րծաթոյն.
զի որո՞շ շուն շղթայիւք կապի ար
ծաթասէրն և ո՛չ կարէ փախչիլ :

Ութէրդ՝ զի 'ի միտս իւր միշտ խը
ռովեալ է. թէ գուցէ գողացան,
կամ թէ յափշտակեցին. և ո՛չ ննջէ
և ո՛չ հանգչի գիշերն ամ :

Խններորդ՝ 'ի յառա՛ւել սիրոյն՝ 'ի
ժամ մահո՛ւանն ո՛չ ումեք ասէ.
այլ թաղեալ յերկրի այնպս մնայ՝
նեռինն գոլով բաժին. վո՞յ և ընդ
նեռինն դասի ոյ՛ուլիսին :

Տասներորդ՝ զի հարկի՛ւ 'ի դժոխս
տանի զունօղս իւր. ոպ ասէ տրն,
ուր գանձք ձերեմ, անդ և սիրտք
ձեր եզիցին : Լսկ արծաթասէրն
ո՛չ պայ ւոյ՝ առ որ հոգին իւր ըն
թաւցի. իսկ թաղելովն՝ մերձ առ
սանդարամետս դնէ. և անդ է
բնակութի նր :

Լսկ պապաճառք այսմ չարութեան

բազում են: 'Եւսի 'ի ձկտմանէ բա
 րուցն լինի. զոր օրինակ՝ մուկն զոր
 ինչ և գտանէ թաքուցանէ: այսմ
 և որ զբարս զայս ունի, միշտ նոյնոյ
 առնէ՝ ոսկ և գէեղի. վսրոյ և էառ
 զբորոտութիւնն նէէմանայ:
 Երկրդ 'ի յաղքատութէ լինի. զի
 զհայր իւր և զմայր՝ աղքատ տեսել
 և չքանորեալ աչքն. վսյ թէպէտ
 և բազում անկանի յետոյ՝ պահէ.
 զի զայն է սովորեալ: Երդ 'ի պատ
 ճառէ ծերութեն լինի. ասելով՝ գոյ
 ժամանակ ծերութե. և ես յայնմ
 ժամու ոչ կտրեմ գործել. զայս պա
 հեմ զի 'ի յայնմ ժամանակի 'ի գործ
 ածից: և կամ հասանէ 'ի ծերութի
 կամ ոչ: Երդ 'ի ծուլութէ լինի.
 զի ասէ՝ յամ ամի ոմ կարէ վաստա
 կել. և կամ թէ ես ոչ վաստակե
 ցայց՝ արծաթով զայլ ոք 'ի վարձու
 առից: Հինգերդ 'ի կասկածանաց
 սովու լինի. զի ասէ՝ սով գայ և
 թշուառութի վախըստեան. պահե
 ցից զի յայնմ աւուր, և կամ յետ

այն նեղուեցն՝ քնար լիցի ինձ ապ
րանաց։ Վսյ տրն ասէ. զվաղիւն մի
հողալ։ Լ սողումն՝ ոչ օգնեսցեն
ինչք յաւուր բարկութեան։
Ա եցերդ ՚ի պատճառէ հիւանդու
թեանց լինի. զի ասէ՝ հիւանդմամբ
և ոչ ոք առանց ընչից պահէ զիս.
Վսյ պահեցից զի գին դեղոյ լիցի.
որք և ոչ գիտեն թէ առանց հիւ
անդութե զմահ ժառանգեն։
Լ օթներդ ՚ի հպարտութէ լինի.
այսինքն զի նախատինս համարին
առնուլ ինչ յումեքէ ՚ի պէտս իւր.
որև զայս քս ոչ անարգեաց առ
նուլ ողորմուի ՚ի պէտս աղքատաց։
Աւթերդ ՚ի յուսահատութէ լինի.
գիտելով թէ ամ ոչ տայ յամ ժամ
զարծաթն զայն. վսրոյ մարգարէն
նախատէ, տր ոչ պահաս առնէ զո
ղորմուի իւր։ Աններդ ՚ի յախտէ
մեծուէ լինի. որք ցանկան փարթա
մուէ. Վսյ ժողովէ բազում ինչս՝
որով յատկանայ մեծատուն լինիլ.
Վսյ ասէ մարգարէն, լաւ է սակաւ

ինչ արդարոյ քան զբազում գանձս :

Տասներորդ ՚ի փառասիրուն է լինի .

որք կամին յառաջագահ լինիլ ե՛ւ

փառանոր . այլ և կամին անուննի

լինիլ և շինել ապարանս և տունս

հայրենիս : Վայ ասէ իմաստունն .

լա՛ն է անուն բարւոք առաքինու

թեան , քան զմեծութի բազում :

այլ և քան զարծաթ և զոսկի՝

շնորհք բարեաց :

Իսկ արծաթսիրուն դեն՝ բազում

և ազգի ազգի խորհուրդս ած է

զմտաւ մարդոյ . և մանաւանդ եկե

ղեցալսնաց . վայ և հարկին առնել

զայն անօրէնութի : Վախ ասեն

դեքն . թէ ամ ինչ հոգւոր՝ ՚ի

ձեռն արծաթոյ լինի և գնունի . ոպ

որք եկեղեցի շինեն և կամուրջ և

պանդոկ . և ահա այսոքիկ գեղեցիկ

են և բարի . արդ փութա՛ և դու

զի ժողովեացես և նմանեցիս այն

պիւտեացն : Օ որ յանդիմանէ դա

ւիթ ասելով . մեծութի թէ առի՛ւ

գայցէ, մի՛ յօժարեացին սիրտք ձեր
և Խրն՝ Թէ զինչ օգուտ է մարդոյ
որ զաշխարհս ամենայն շահեսցի և
զանձն իւր կորուսցէ:

ԼՆԴ ասեն. Թէ քահանայքն ամ
մեծատունք են եղեալ. և բազում
ձիս և ջորիս ժողովեալ են. արդ
փութա՞ն զի և դու ժողովեսցես և
եղիցիս որդի հօրն քո: Օ որ Խրն
յանդիմանէ ասելով. վայ՛ ձեզ մե
ծատանց՝ զի ընկալայք զմիսթարու
Թի՛ ձեր: յաղագոս որոյ և դու յետս
դարձիր զի մի՛ զայս վայս լսիցես:

ԼՆԴ ասէ դեն. ժողովեա՞ն բազում
ինչ. զի գոյ հնար գանձս առնել,
և ինչս ստանալ: և Խն ծառայել:
զոր Խրն յանդիմանէ ասելով. ո՞չ
կարէք երկու տերանց ծառայել.
այ և մամօնայի: ՉԻ՞դ ասէ դեն.
հիւրք բազում են որ գան առ քեզ
և վաղին դու գլուխ կամիս լինի.
արդ ժողովեա՞ն ինչս զի մի՛ ամաչես
ցես ի նոցանէ: Օ որս որոգայթ
ասէ դա՛ն իմ. Լարս ձգեցին որոգայթ

ոտից իմոց • շուրջ զշաւղօք իմ' :
 Հինգերորդ ասէ դեն • Թէ դու ևս
 խեղճ ես՝ փոքր ինչ պահէ՝ զի քեզ
 ոտից և գլխոյ լինի • մի՛ տալ յաշ
 քատն զի նա յամ տեղ գտանէ • և
 կամ ասէ • Թէ այսօր պատասխանէ՝
 վաղիւն երբ գայ յայնժամն տաս :
 () որ յանդիմանէ սողոմօն • մի՛ դան
 դաղիր բարիս գործել առ տկարսն
 յորժամ ձեռնհաս իցես • և մի՛ ա
 սեր երթ և վաղիւն եկ • զի ոչ գի
 տես Թէ վաղիւն ինչ ծննիցի քեզ
 և առաքեալն՝ մարմնոյ խնամ մի՛ տա
 նիք ասէ ՚ի ցանկութիս ամենեւին •
 II Եցերորդ ասեն դէք • Թէ այս ա
 նուն մարդ՝ ՚ի յայս ինչ նո՛ւազ մար
 դոյ զինչս յափշտակեաց՝ և զայս ինչ
 բարեգործութիւնս արար • վս զի
 ոչ առնէր նա որ զարծաթն ունէր
 արդ փութա՛ դու՝ ահա՛ այս ինչ ա
 նուն մարդ բազում ինչս ունի՝ խը
 լեա՛ ՚ի նմանէ և նոքօք բազում բա
 րութիս արա : () որ յանդիմանէ
 մրգբէն • յափշտակուէ մի՛ ցանկայք

Լ այլն: Լ՝յլ ասէ տրն . թէ ոչ
միայն զայլք մի՛ զըկել, այլև որ կա
միցի ՚ի քէն հանել զբաճկոնդ,
թող ՚ի նա և զշապիկս:

Լ օթներդ ասէ դեն . թէ դու մեծ
մարդ ես . վարդապետ ես և փիլիսո
փայ . քեզ բազում արծաթ պիտի .
զի վս այդ բազում աշխատել ես:

Օ որս յանդիմանէ տրն ասելով .
զամ զոր ինչ կամիցիք թէ արսցեն
ձեզ մարդիկ և այնպէս արարէք և
դուք նց . զի այն իսկ են օրէնք և
մարդարէք: և թէ՛ որ մեծն է ՚ի
ձէնջ, եղիցի ամենեցուն ծառայ և
յետին: Լ թերդ ասէ դեն . թէ
եզինս լծեալ և բազում արտորայս
ցանեալ . զի բազում մարդոյ հան
դիստ լիցիս . ծերոց և օտարաց:

Օ որս յանդիմանէ ՚ի գործքն ասե
լով . ոչ է պարտ մեզ թողուլ ըզ
բանն այ և պաշտել զսեղանս:
Լ ններդ ասէ դեն . թէ զինչ պա
տեհագոյն է զի դու եպօկս մարդ
և վարդապետ և քահանայ, կամ

Հարկեւոր տանուտէր՝ զոր դու ալ
 տեղի չուխայ ես զգեցեալ. պարտ է
 քեզ զի սուք հագնիս և շուպ և
 այլ զի վայելէ քեզ. և վս այն ստեղ
 ծեալ է ան՝ Այ ասէ առաքելն.
 յիշեալ զի ոչինչ բերաք յաշխարհ,
 և ոչ կարեմք տանիլ. այլ ունիմք
 բաճական կերակուր և հանդերձ,
 և այնու շատասցուք. Իսկ որք կա
 մին մեծանալ՝ անկանին յորոգալթս
 և՛ ի ցանկութիս բազումս՝ յանմիտս
 և՛ ի վնասակարս. որ կորուսանեն ըզ
 մարդիկ. Տասներորդ ասէ դեն.
 դու ինքնին աղօթօղ ես և ժամա
 րար. և այլք քեզ տան, զի ի քո աղօ
 թիցդ՝ նոցա մասն լիցի արդ՝ դու
 առա՛նելեալ ես սրբութե՛ և ոչ է
 պիտոյ այլոց աղօթքն քեզ. վս մի՛
 տացես զարծաթն քո այլոյ ուրուք
 զի դու կարօղ ես. Այ արն յան
 դիմանէ ասելով. զհարդ դժո՛ւարին
 է որ զինչս ունիին մտանել յար
 բայութիւն այ. և թէ երանի՛ ողոր
 մածաց. Իսկ որ ոչ ողորմի աղքա

տին և ունի ինչս, այնպիսոյն թէ
թէ ողորմի ան :

Լ՝ յառաջ տարակոյս ինչ. զի տրն
ևս խրատէ բանիւ զարծաթասէրն
ասելով աշակերտացն. մի՛ ստանայք
ոսկի և մի՛ արծաթ և պղինձ :

Լ՝ յետոյ ասէ անետարանիցն .
եդ գանձանակս՝ յոր բազում ինչս
արկին ի նա մեծատունքն. և կինն
այրի զամայսն : Լ՝ ըրդ՝ եթէ զար
ծաթսիրութիւն խոտեաց, ընդէն և
ինքն ստանայր. զի հակառակ երևի
բանից իւրոց :

Լ՝ յամ բանի պոսխանի տան վար
դապետք . թէ քն՝ ան էր ճշմար
տապէս . և բազում ինչէ զոր ան
արար՝ և զմեզ արդիւն : Այ ինքն
երդունաւ . լնայնմ, յանձն իմ երդ
նում ասէ տր : և մեզ պատուիրեց
մի՛ ի գլուխ քո երդնուցում. և մի՛
յայլսն : Լ՝ ըն ուն ինքն միշտ գործէ
ըստայնմ, հայր իմ մինչև ցայժմ
գործէ և ես գործեմ, և մեզ օրի
նադրեաց պահել զշաբաթն. և այլք

բազումք։ Այսպէս և մեզ օրինա
դրեաց խոտել զարծաթն՝ և ինքն
հառ․ վս զի մեք նովան չարութի
կարեմք առնել՝ և ան ոչ կարէ առ
նել չար երբէք։

Վարձ զաշակերտսն յառաջին առա
քումն՝ առ հրէից ժողովուրդն ա
ռաքէր․ ըստայնմ, ՚ի ճանապարհս
հեթանոսաց մի՛ երթայցէք․ այլ
երթայք առ ոչխարս կորուսեալս
տանն խորայելի։ Այս հրամայեաց
ոչ ստանալ արծաթ ընդդէմ հրէից
արծաթսիրուէն, (ըստայնմ, իբրև
լուան՝ քանզի արծաթասէրք էին՝
անդոսնէին զնա։) զի արդիւնաւոր
լիցի քարոզութի առաքելոցն ըստ
դործոցն։ Ասկ յետոյ հրամայեաց
առնուլ․ ոչ վս ինքեանց, այլ վասն
աղքատացն․ որ միշտ մերձ քի նըս
տէին։ Վարձեալ՝ յորժամ առա
քեալքն ՚ի քարոզութիւն երթային՝
միայն էին և ոչ ունէին փոյթ զու
մեքէ․ վս բաւական համարեցաւ
յոր տուն մտանել՝ անդ ագանիլ

և ուտելն: և այս՝ յամ տեղիս պատ
 րաստ գոյր նց: Եւ յայ և մեզ ասէ.
 յորժամ միայն իցեմք առանձնացլ,
 ոչ ստանալ արժաթ. զի մի անձն
 ապրի առանց ընչից: Եւ յորժամ
 ՚ի միաբանութե լինիցիմք, առնուլ
 հրամայէ վս միաբանութեն. Ու
 և յուդա կրէր զարկղն վասն բազ
 մութե աշակերտացն: Եւ պետրոս
 առնոյր զգինս գեղջն յանանիայէ
 վս միաբանութե հանցեւոցն:
 Եւ արձլ հանտացեալքն քի՛ կր
 կին գասս լինին միշտ. մինն եկե
 ղեցական, և միւսն ճական:
 Եւ որդ՝ զառաջինն որ արգելեաց,
 վս եկեղեցականաց օրէնս գրեաց
 ոչ ստանալ արժաթ. զի ոչ ունին
 կինս և որդի. և ժողովուրդն բա
 ճական ծառայէ նց: Եւ յետոյ որ
 հրամայեաց առնուլ, վս հասարա
 կաց ժողովուրդեանն ասաց առնուլ
 զի նոքա կին ունին և որդիս. և
 հարկ թգնրաց գոյ ՚ի վր նց. որոց
 անհնարէ առանց արժաթոյ լինիլ:

Լ յլումանք ասեն . թէ զգանձա-
նակն զայն՝ ո՛չ թէ քս եդ , այլ
'ի հնոցն 'ի քահանայիցն սահմանեալ
գոյր . որ յամ շաբաթս՝ ինչս ժո-
ղովէին վս քահանայիցն և աղքա-
տացն : Եւ կամ թէ՝ զերկդրամեան
անդրանկացն՝ զոր մովսէս հրամայ
եաց առնուլ՝ անդ արկանէին :
Վարձեալ՝ այլ յայտնի և պարզա-
գոյն . զի մի 'ի նոյն դասս քահա-
նայից օրէնսէ երկոքինս : **Օ** ի զա-
ռաջինն ասէ՝ մի՛ ստանալք՝ որ է բռ-
նութէն . այսինքն՝ զոք մի՛ խաբէք
դուք կամ զրկէք . կամ աշխարհա-
բար վաճառ մի՛ առնէք և շահեցու-
ցանէք : և այս առաջին պատուի-
րենն ո՛չ ստանալ : Եւ յետոյն յայտ-
նի ցուցանէ՝ որ ո՛չ թէ նոքա խնդ-
րէին , այլ մեծատուներն՝ իւրեանց
կամաւն արկանէին պղինձ 'ի գան-
ձանակն : **Ս** ի իմաստուք թէ զոր
ինչ եկեղեցոյ ոք ողորմութիւն ա-
րասցէ սրտի մտօք՝ մի՛ խոտեացուք
զայնպիսին այլ առցուք , և յեկե-

դէցին և յեղբարսն և յաղքատս 'ի
գործ արկցուք : Իսկ թէ՛ ոք ար
ծաթասէր մըօք զբարին 'ի չարն
փոխեացէ՛ անձանց իւրեանց միայն
ստանալով, լինի իբրև զյուդա . որ
եղև մատնիչ քի՛ և անասպան . զի
այն ախտն կորոյս զնա :

Եւ գիտելի է, զի այլ է առնուլն
և տալն, և այլ է սիրելն և պա
հելն : Այսան որոյ զառաջինն ասէ
մի՛ ստանայք . իբր թէ՛ մի՛ սիրէք և
պահէք : Եւ յետոյ ասաց՝ առէ՛ք
և տուք . զի 'ի պահելն և՛ ի թաղելն
մեղք լինի՝ եւ ո՛չ թէ՛ աղքատաց
բաշխելն : Ուստի յայտ է՝ թէ՛ զար
ծաթսիրութիւնն անարգեաց եւ
ո՛չ զառնուլն և զտալն . վնայ ասէ,
ձրի՛ առէք և ձրի տուք :

Բանզի նմանի արծաթսիրութիւն
ծառի արմատացելոյ յերկրի և
բազում ոստս արձաղելոյ . և թէ՛
լմի ճիւղքն հատանէս՝ ո՛չ չորանայ
ծառն մինչև յարմատոյ խլեացես
զամենայն մայառան : Եւ յապէս և

արմատ ամենայն չարեաց այս է. զի
 թէ զպոռնկութիւն հատանես 'ի քէն՝
 և արծաթսիրութիւնն դոյ 'ի քեզ՝
 դարձեալ պիտի պոռնկիս. այսպէս
 և զայլն իմա: Իսկ թէ զսաքակե
 ցեր 'ի քէն, և ամ մեղք ընդ սմա
 կորեաւ: Վարձեալ նմանի նաւի
 ծանրաբեռին. որ 'ի շարժիլ ալեցն՝
 փութով ընկղմի. այսպէս և արծա
 թասէրն՝ ինքն ի վր իւր բերէ ըզ
 հոգսն և զպատրանս մեծութեանն
 և կորնչի: Վարձեալ՝ տրն փշոց
 նմանեցուցանէ. ըստայնմ, և այլն
 անկաւ 'ի մէջ փշոց. զի որպէս փութն
 զբոյսն խոցէ և ոչ թողու աճել,
 այսպէս և արծաթն զհոգին խոցէ
 և ոչ տայ թոյլ առաքինութիւնն ել:
 Վարձեալ նմանի մարդոյ՝ որ կա
 պեալ բազում բեռն և ոչ կարէ
 շարժել և այլ բառնայ 'ի վերայ. և
 զայն ևս ոչ կարէ շարժել: Եւ այսպէ
 արծաթասէրն միշտ ժողովէ և ոչ
 կարէ յիւր էութիւն անցուցանել
 'ի խիստ սիրոյն. վասն որոյ և այլ

սկսանի ժողովել: Իսկ անինչքն՝
 նմանի սուրհանդակի. որ ՚ի միում
 աւուր՝ ՚ի բազում վայրս անցանէ:
 Կարձեալ նմանի Թուչոյ՝ որ կա
 պեալ է ընդ քարի և ո՛չ կարէ Թու
 չիլ յօդս. այսպէս և ընչասէր հո
 դին ո՛չ կարէ Թուչիլ յերկինս.
 քանզի ՚ի վայր քարչէ յանդուռս:
 Լլ յլ վերջին այսու ամի անէծս
 ընդուռնի յայ. որպէս ասէ յօրէնսն՝
 անիծեալ ամենայն որ պաշտէ ըզ
 կուռս. այսինքն՝ զարծաթն՝ և զնը
 մանիս նր: Յորոց յայսցանէ զեր
 ծուսցէ՛ զմեզ Վս:

Իսկ արծաթասէրն քանզի յոյժ սի
 րէ զարծաթն և վս ախտին մինչ
 հարկին մսխէ, ապա սէր արծա
 թոյն տեսեալ զպակասութիւն սի
 րելոյն՝ տրտմի: Աս որոյ և ընդ
 արծաթսիրութեն՝ զտրտմութիւնն
 դասեաց:

* Որ ըստ ասորի, ե շշշւան ե ապաշ
խարութ. զի փրկութիան անապաշաւ գործէ
'ի Կէ: Իսկ որ աշխարհիս արդաութիանն է
մահ գործէ ըստ առաքելոյն:

Յաղագս Տրդաութ:

Գլուխ Գ:



Լ ԳԻՏԵԼ Ի Լ,

զի տրամուծին բաժանի
յերկուս. 'ի հոգւորն,

և 'ի մարմնաւորն: զոր ասէ, և

ձի: Եւ որք յաշխարհի եմք՝ երկո

քեան սոքա ժամանակաւորք են. վս

զի 'ի փոփոխմանն մարդոյս կենք.

երբեմն 'ի բարին փոխի և երբեմն

'ի չարն: Իսկ մարմնաւոր տրամու

ծիւնն՝ զչափն իւր ձգէ մինչև 'ի

կատարած կենաց մարդոյն: Իսկ

հոգւորն՝ թէ անցանէ յայսմ կեն

ցաղոյս՝ է յաւիտենական:

Եւ հոգւոր տրամուծին բաժա

նի յերկուս: 'Եւսի՝ վասն առա

քինութեց պակասութե: Եւ եկդ՝

վասն պակասութեան շնորհաց:

Իսկ մարմնաւորն ևս յերկուս բա
ժանի։ Վախ վն իւրոց ընչիցն և
անձին պակասուէ։ Եւ երկրորդ
վն օտարաց սիրելեաց պակասուէ,
և թշնամեաց բազմուէ։

Իսկ տրտմուէ պատճառք բազում
են։ Վախ ՚ի նոճազութի ցանկու
թեցն լինի . քանզի այս է սահմանն
իւր՝ պակասութի ախորժակացն .
այսինքն՝ որք պիղծ ցանկուէ կնոջ
և այլ աղտեղութեց նոցին ցանկան
և ոչ հասանեն, վասն որոյ տրտմին։
Եւ իտ՝ ՚ի խորհրդոց յառաջ եղեւոց,
որոց կատարումն յերկար ժամանա
կաւ լինի և ոչ է առ ձեռն պատ
րաստ . որն ոք կամի թագաւորել
կամ քահանայ լինել կամ յայտնել
զխորհուրդն . ոն տր մեր զի ասէ
տրտում է անձն իմ մինչև ՚ի մահ,
որոց բազում աշխատութի պիտոյա
նայ . և կամ հասանել ոչ կարէ՝ վն
տրտմի։ Եւ իտ լինի ՚ի հեռաւորու
թի տեղեաց և գաւառաց, զի ցան
կայ ընթանալ այսր անդր և ոչ կա
րէ

րէ վս ծուլութե և տկարութե և
 ծերութե և կամ վս դառնութե
 ժամանակին . ոպ և մեզ աստանօր:
 Զորք լինի 'ի հակառակողաց . որք
 կամ ընդդէմ դառնան բանի նր,
 և կամ սպանանել ջանան գլխովին
 զնա, և կամ խափանել զգործս նր.
 զորօրինակ՝ այլասեռքն զայս տըրտ
 մութիւնս մեզ միշտ բերեն:
 Հինգերորդ լինի յառանել գիտութե.
 զի որ յանելու 'ի գիտութիս, յանել
 լու 'ի ցանս ասէ սողումօն: Քանզի
 զամ զոր գիտէ դք՝ առնել պարտի.
 և 'ի չառնելն՝ արբցէ գան բազում
 ասաց տրն: Ան մինչ ոչ կարէ առ
 նել 'ի պատճառէ իմեքէ, վս միշտ
 'ի տրտմութե կայ: Ասկ ոչ գիտօղն
 և ոչ ցանի վս ինչ. վս և ոչ տրտմի
 և արբցէ գան սակաւ ասաց տրն:
 Սեցերորդ՝ յառանել անգիտութե
 լինի . որ զանճնարինն խնդրէ . ոպ
 թէ դք անմահանալ ջանայ . և կամ
 առանց կերակրոյ և այլոցն կալ . և
 կամ ընդ օդս թռչիլ . և 'ի վերայ

Ժողովուրդն թանալ զորս ոչ կարէ բը
 նուին տանիլ՝ վնս և տրտմի. և այս
 ընդ դիմակ և ներքին ծայրն
 Լաթներդ՝ լինի յանկարծաճաս և
 յառանել կսկծմանէ. ոպ թէ դք ՚ի
 միում ժամի՝ տեսանէ զամ որդիս
 իւր մեռեալ և զտունն իւր աւե
 րեալ յանօրինաց. որպէս յոբայ և
 մեզ պատահեաց. Ութերորդ լինի
 յանճաւատութի. ոպ դք անգէտ
 գողով և անճաւատ, ոչ ճաւատայ
 յարութեան մեռելոց և թողուե
 մեղաց. և ոչ ճաւատայ ուսուցանո
 ղաց. և յինքենէ ոչ ունի՝ վնոյ և
 տրտմի. և այս անհնարին տրտմու
 թի է. Իններորդ ՚ի բռնամտութի
 լինի. ոպ դք ունի ջանս և կամի ար
 ուեստ և գիտութի ստանալ և ոչ
 կարէ վն տկարութե մտացն՝ վնոյ
 և տրտմի. Տասներդ՝ լինի վասն մե
 ղաց. ոպ նոքա որք զղձացան և դար
 ձան ՚ի մեղաց. որպէս դաւիթ ասէ՝
 Լուացի զամ գիշեր զմահիճս իմ.
 և պետրոս ելաց դառնապէս.

Ս' ետանրդ լինի վն այլոց չարեց .
ոպ մարգարէն ասէ , տրամութիւն
կալան զիս 'ի մեղանորաց :
Լ' րիտաներդ յանբժշկելի ցանոց
լինի' ոպ պօղոսին . վն ետ տր ասէ
խայթ մարմնոյ սատան կռիւել զիս
զի մի' հպարտացայց :

Լ' ան բաց յերկուցն որ վն հողեւ
որին է , այլն ամ բազում ոճիրս
մեղաց գործեն 'ի մեզ : 'Սախ' զի
ամ գազան զայլ ոք ուտէ և պատու
ռէ : Իսկ տրամութին՝ զանձն իւր
կորուսանէ : Լ' րիդ' զի տրտմեալ
մարդն ոչ ումեք օգնական կարէ
լինիլ և կամ կարեկից . զի անձն
անչար , ապա զայլոց վտանդ 'ի միտ
կարէ ածել : Լ' րդ' զի ամ ցան ըզ
մարմինն ցանեցուցանէ , իսկ տըրտ
մութին՝ զհոգին վիրանորէ առանց
սրոյ . որոյ վահան՝ նման ինքեան
պիտոյ է : Չ' րրդ' զի ոչ տայ ըզ
միտսն ուղղել առ ամ . այլ հատա
նէ' զյոյս նորա . զի թէ գիտէր թէ
ամ կարօղ է պատրաստել զամենայն

պիտոյսն իւր՝ ո՛չ տրտմէր :
 Հինգերորդ՝ զի զաղօթս ո՛չ կարէ առ
 նել ամ ոք որ տրտում է . զի խա
 փանէ զբանականութիւն մարդոյ .
 որ ՚ի սրտէ անտի գայ յառաջ .
 Վեցերորդ՝ զի իմաստութի ո՛չ կարէ
 ստանալ յինքն . զի ոպ ծուխ ըզ
 տունս մթացուցանեն , այսպէս և
 տրտմութի զհոգին խաճարեցուցա
 նէ : Եօթներորդ՝ զի զզգայարանն
 կուրացուցանէ . և թէ բազումս
 խօսին մերձ ինքեան՝ ամենեւին ո՛չ
 լսէ : Ութերորդ , զի ընկեր դիճաց
 լինին՝ միշտ ՚ի տրտմութե գոլով .
 զի նց յատկութի է ո՛չ երբեք ու
 ըստանալ յօրէ յայնմանէ յորմէ հե
 տէ անկան : Երեսներորդ , զի զամ ա
 ռաքինութիս՝ թերակատար տայ առ
 նել . իբր թէ ո՛չինչ գոյ ՚ի նս :
 Տասներորդ , զի ո՛չ տայ մերձենալ
 յօրէնս անային և ՚ի հաճատուն քի .
 քանզի ասէ , դժոճարին է ճանաչք
 արքայութեն և նեղութի լի՛ են . և վը
 կայութի յաճեալունէ առնու . նեղ և
 անձուկ է ճան՝ :

Իայց տրտմութե դեն՝ բազում
ինչ ասէ մեզ և նոքօք կորուսա-
նէ . զոր յանդիմանելի է բանիւք
ածայնովք : Եւ ասէ թէ զհարդ
հեծես և աղաղակես . զի ոչ երբէք
լսէ քեզ ան . Օ որ ստէ անային
գիրն յեկեցն . հեծեծեցին և աղա-
ղակեցին որդիքն իսկի և լուսն
որ հեծուէ նց . և մարգարէն յո-
վել՝ յորժամ հեծեծիցէք և յոգոց
հանիցէք , ասացից անասիկ եմ .

և այլք բազումք :

Երկր ասէ դեն՝ պարտ է տրտմիլ
քեզ . քանզի միայն ես և ոչ ունիս
ընկեր . և ոչ պահէ ան զքեզ :

Օ որ ստէ արն յեկեցն և ասէ .
անանասիկ ես առաքեմ զհրեշտակ
իմ որ պահեսցէ զքեզ յամ ճանա-
պարհս քո . մինչև տարցի յերկիր
զոր պատրաստեցի քեզ :

Երր ասէ դեն՝ թէ դու ընդ դես
երբ կարես պատերազմիլ . զի նոքա
անմարմինք են և զօրաւոր . և դու

մարմին և տկար։ Օ որ յանդիմանէ
տրն յեկեցն ասելով . մի՛ երկնչիք՝
տր անձեր՝ նա տայ պատերազմ
ընդ նոսա փոխանակ ձեր։

Չորրորդ ասէ դէն . զհարդ կարես
պահք կենալ կամ աղօթել կամ ա
ռաքինի լինիլ . մի թէ դեք չեն
կենդանի։ Օ որ յետու ասէ՝ զօրա
ցիւր և քաջ լեր . մի՛ երկնչիւր և մի՛
զահի հարկանիր . զի ընդ քեզ է տր
անձ քո յամ ճանապարհս յոր և եր
թայցես։ Հինգերորդ՝ ասէ դէն
տրտմուէ սուտ առ ուսումնաւորս .
այդ որ ձայնիւ պաշտօնդ է մի՛ տա
նիր . զի հպարտացուցանէ զքեզ և
փառասիրէ և դիւահարէ։ Օ որ և
դաւիթ սոքօք ազատէր զսաւուղ
ի դիւական ցաւոցն։ Այ գրեալ է
ի գիրս Թաւրուէց . դաւիթ հարկա
նէր զքնարն՝ և ազատէր սաւուղ
ի յայտոյն չարէ։ Լա՛ն ինքն դաւիթ
ասէ . ձայնիւ իմով ես առ տր կար
դացի։ Լա՛ն հրշակք ի ծննդեանն՝
փառք ի բարձունս երգէին . այլ

զի կամի ծուլացուցանել զմարդն,
 վնայսորիկ մեծ մեղս ասէ զայս:
 Ս եցերդ ասէ դէն. թէ ազգի ազ
 գի սուր և մեքենայս պատրաստեալ
 է սատանայ 'ի վր քո՝ զեմրդ ապ
 րիս դու 'ի նմանէ: Օ որ դա՛նիթ
 պատասխանէ՝ սուրբ նց մտցեն 'ի
 սիրտս նց. և աղեղունք նց փշրես
 ցին: Օ ի դու գաս 'ի վր իմ աղե
 ղամբ և սրով, և ես գամ 'ի վր քո
 անո՛ւամբ տնայ: Եթեքնդ ասեն
 դէքն. թէ դու հայր ունիս և մայր
 և նոքա ծերացել են. և 'ի քո ձեռնդ
 ոչինչ գոյ որ օգնես նոցա. արդ՝
 զեմրդ կարես զպարտս նց վճարել
 որում տրն ասէ. ամ որ եթող ըզ
 տուն և զհայր և զմայր, հարիւրա
 պատիկ առցէ. և զկեանս յա՛նտե
 նականս ժառանգեսցէ':

Ութերդ ասէ դէն. թէ ահա 'ի
 մեղս անկար և ուրախացա՛ն սատա
 նայ. արդ՝ այլ ո՛չ կարես զնա տըրտ
 մեցուցանել. զի ո՛չ թողու դառնալ
 'ի մեղաց: Որում միքիա պատաս

խանէ . մի՛ ուրախ լինիր՝ ի վր իմ
 Թշնամի իմ . զի Թէ անկայ և գլորե
 ցայ , յառնեմ կանգնիմ . և Թէ նըս
 տայ՝ ի խաւարի՝ տր լոյս առնէ ինձ .
 Խններդ ասէ դէն տրտմութե .
 Թէ միայն ոչ կարես երթալ յեկե
 ղեցին յաղօթս զի գիշեր է . և ահա
 յայս նիշ տեղով սատանայ զմարդ
 ոք սպանեալ է՝ և զքեզ ևս ստոյգ
 սպանանէ : Օ որ յոբ պատասխանէ
